

« 15 » սեպտեմբերի 2025թ.

ք. Երևան

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռետորո Ֆիլինգս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Ավագյանի, որը գործում է «Ռետորո Ֆիլինգս» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրասենյակային հաշվողական սարքերի և սերվերների պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 15 714 800 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:
Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $V_1 = V_2 / N_1 \times D_1$, որտեղ՝

49-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կատարողի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և

արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

- 7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
- 7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են դատական կարգով:
- 7.12 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
- 7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Վ/Ը 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-66-76
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

ԿԱՏԱՐՈՂ
«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
հասցե՝ Բ.Երևան, Արաբկիր 21փ. 12, 32 բն
Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Վ/Ը 19300283736000
ՀՎՀՀ 00125777
Հեռ: 055820810
Էլ. Փստ: retro.tender@mail.ru



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

«Որամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր գինը մինչև	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50311100/5	Ըստ հավելված-1.1-ի	դրամ	15714800	1	Նալբանդյան 130	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, պատվիրատուի մոտ պահամջն առաջանալու պահից 3 օրվա ընթացքում

Լրացուցիչ՝
 Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել առանձին պահեստամասեր կատարողի կողմից, տեղում պատվիրատուի կողմից տեղադրելու նպատակով:

Անսարքությունների վերացումը՝ պատճենահանման սարքերի, թանաքաշիթային տպիչների, լազերային տպիչների, սկաներների, անխափան սնուցման սարքերի, մոնիտորների, նոթբուքների, համակարգիչների վերանորոգումը, քարթրիջների լիցքավորումը (լազերային և թանաքաշիթային) պետք է կատարվեն երկուսից երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկ եղած դեպքում, ծառայությունը պետք է մատուցվի նաև տեղերում (ՀՀ ՆԳՆ տարբեր ստորաբաժանումներում՝ ըստ պահանջագրերի) կատարողի միջոցների հաշվին ՀՀ Երևան քաղաքում և մարզերում:

Պրոֆիլակտիկան պետք է ներառի սարքերի և սարքավորումների, գործածվող նյութերի, դրանց իրանի, վիդեոքարտի, պրոցեսորի և դրանց հովացուցիչների մաքրում և յուղում, պրոցեսորի հովացման տերմոպաստայի նորացում, թարմացում, կատարողի միջոցներով:

Համակարգչի, սերվերների, նոթբուքի, մոնիտորի, տպիչի, պատճենահանող սարքի սկաների և այլ սարքերի ու սարքավորումների վերանորոգումը պետք է ներառի մաշված, վնասված կամ խափանման մասերի փոխարինում նոր պահեստամասերով՝ վերադարձնելով փոխարինված պահեստամասերը պատվիրատուին:

Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից և լինոն նոր:

Եթե ծառայությունը սահմանված ժամկետում չի մատուցվել, ապա անհրաժեշտության դեպքում Կատարողի կողմից Պատվիրատուին ժամանակավոր օգտագործման համար պետք է տրամադրվի աշխատող այլ համապատասխան սարքեր և սարքավորումներ:

Յուրաքանչյուր մատուցված ծառայության կամ կատարված աշխատանք պատվիրատուին հանձնվում է համապատասխան երկկողմանի ստորագրված հանձման-ընդունման ակտի հիմքով, պարտադիր տեղում ստուգելով պատվիրատուի ներկայացուցչի ներկայությամբ սարքերի և սարքավորումների աշխատունակությունը:

Քարթրիջների լիցքավորումը (լազերային և թանաքաշիթային) պետք է կատարվեն մեկից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նոր վերալիցքավորված քարթրիջը պետք է մինչև տոների վերջանալը տպի անթերի (այլապես պետք է կատարողի միջոցների հաշվին վերացվեն առաջ եկաց թերությունները)՝ ապահովելով բարձր որակ, մուգ տպագրություն:

Կատարողը տեղում յուրաքանչյուր լիցքավորված քարթրիջը պատվիրատուին հանձնելիս պետք է ցույց տա քարթրիջի անթերի աշխատանքը:

Լիցքավորվող տոները և փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն որակյալ և նոր՝ Static Control կամ HG Toner:

Քարթրիջում լիցքավորված տոների կշիռը պետք է համապատասխանի անվազն գործարանային կշռին (համապատասխանաբար ըստ մոդելների), ապահովելով քարթրիջին համապատասխան տպագրված էջերի քանակ:

Կատարողը պետք է ունենա համապատասխան սերվիս կենտրոն(ներ), ծառայությանը համապատասխան սերտիֆիկացված մասնագետ(ներ), կատարողի կողմից տրվի կատարված աշխատանքների երաշխիքային ժամկետ (նվազագույնը մեկ տարի):
Սարքավորման չվերանորոգման դեպքում պահանջագրին կցել ԱԿՏ չվերանորոգման վերաբերյալ (նշելով պատճառները):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-66-76
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am



ԿԱՏԱՐՈՂ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
հասցե՝ ք.Երևան, Արաբկիր 21 փ. 12. 32 բն
Բանկ՝ Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 19300283736000
ՀՎՀՀ 00125777
Հեռ: 055820810
Էլ. Փոստ: retro.tender@mail.ru



Տեխնիկական բնութագիրը	Ծառայության յուրաքանչյուր տեսակի մատուցման միավոր առավելագույն գինը Ընդհանուր գինը/ ՀՀ դրամ
Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	
Համակարգչի	
Պրոֆիլակտիկա , դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչների մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում)	2000
Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows 8,8.1,10,11 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus,) Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop,COREL DRAW,PROMT, LINGVO), Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում (AUTOCAD, ARCHICAD),	5000
CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը LGA 478/775/1050/1150/1155/B75/1155/1200/1700	3000
Մայրական տպասալի նորոգում /ներառյալ պահեստամասերը	6000
Մայրական տպասալի փոխարինում ներառյալ LGA 478/775/945/G31/G41/H61/H81/H110/ 1150/1155/B75/1156/1200/1700 տպասալը	35000
DELL Vostro 3888/ DELL Vostro 3910, HP 260 G3 DM Mini Busines PC/HP Pro Mini 400 G9 Desktop PC համակարգչի մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը	65000
DELL Vostro 3888/ DELL Vostro 3910, HP 260 G3 DM Mini Busines PC/HP Pro Mini 400 G9 Desktop PC համակարգչի սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	30000
HP 440 G9 AIO Ամբողջը մեկում համակարգչի մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը	125000
HP 440 G9 AIO Ամբողջը մեկում համակարգչի սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	30000
HP 440 G9 AIO Ամբողջը մեկում համակարգչի մոնիտորի փոխարինում ներառյալ մոնիտորը	100000
HP 440 G9 AIO Ամբողջը մեկում համակարգչի պրոցեսորի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	25000
CPU փոխարինում ներառյալ LGA 775 3.0GHz, 3.2GHz. Core 2 Duo E7300, Core 2 Duo E7400,Core 2 Duo E7500, Coer 2 Duo E8300, Coer 2 Duo E8500, Core 2 Quad Q9500	15000
CPU փոխարինում ներառյալ ինտել Core i3/i5/i7 համապատասխան պրոցեսորով	24000
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մբ 1066/1333ՀՅ (DDR3 2GB 1066/1333MHZ)	8800
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մբ 1066/1333ՀՅ (DDR3 4GB 1066/1333MHZ)	12500
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ3 8192Մբ 1066/1333ՀՅ(DDR3 8GB 1066/1333MHZ)	18500
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 4096Մբ 2400ՀՅ(DDR4 4GB 2400MHZ)	18500
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8192Մբ 2400ՀՅ(DDR4 8GB 2400MHZ)	16500
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ4 16384Մբ 2400ՀՅ(DDR4 16GB 2400MHZ)	19800
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ5 8192Մբ 5200ՀՅ(DDR5 8GB 5200MHZ)	18000
Ram փոխարինում ներառյալ ԴԴՌ5 16384Մբ 5200ՀՅ(DDR5 16GB 5200MHZ)	26000
SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն/Նվիդիա ԴԴՌ3 2Գբ ՊիԻԿԱյ-Էքսպ(nvidia, Ati Redeon/Nvidia DDR3 2Gb PCI Exp 128bit) կամ համարժեք	33000

	25000
HDD փոխարինում ներառյալ HDD 1ՏԲ,7200ռպմ, SATA3	32000
HDD փոխարինում ներառյալ HDD 2ՏԲ,7200ռպմ, SATA3	46500
HDD փոխարինում ներառյալ HDD 3ՏԲ,7200ռպմ, SATA3	64000
HDD փոխարինում ներառյալ HDD 4ՏԲ,7200ռպմ, SATA3	90000
HDD փոխարինում ներառյալ HDD 6ՏԲ,7200ռպմ, SATA3	147000
HDD փոխարինում ներառյալ HDD 10ՏԲ,7200ռպմ, SATA3	15600
SSD-ի տեղադրում 120GB ներառյալ SSD-ն	25400
SSD-ի տեղադրում 240GB ներառյալ SSD-ն	38000
SSD-ի տեղադրում 500GB ներառյալ SSD-ն	62000
SSD-ի տեղադրում 1000GB ներառյալ SSD-ն	16000
SSD-M2-ի տեղադրում 120GB ներառյալ SSD-M2	26200
SSD-M2-ի տեղադրում 240GB ներառյալ SSD-M2	39400
SSD-M2-ի տեղադրում 500GB ներառյալ SSD-M2	73000
SSD-M2-ի տեղադրում 1000GB ներառյալ SSD-M2	9000
CD-RW/DVD-RW-ի փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(CD-RW/DVD-RW)	9000
Սնուցման բլոկի նորոգում (վնասված կոնդենսատորների, միկրոսխեմաների, հովացուցիչի և այլ պահեստամասերի փոխարինում) նորով	300
Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm, 450W) ներառյալ սնուցուման բլոկը	7800
Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 550W) ներառյալ սնուցուման բլոկը	9800
Սնուցման բլոկի փոխարինում (Cooler 120mm 650W) ներառյալ սնուցուման բլոկը	13000
Ցանցային քարտի տեղադրում PCI կամ PCI-e 10/100/1000 Mbps ներառյալ ցանցային քարտը, Lan Card PCI կամ PCI-e	8000
Համակարգչային ստեղնաշարի փոխարինում նորով USP կամ PC2	6000
Համակարգչային մկնիկի փոխարինում նորով USP կամ PC2	5000
Նոթբուքի	
Պրոֆիլակտիկա, դիագնոստիկա (փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչի մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում,(փոշիների մաքրում, պրոցեսորի, իրանի, վիդեոքարտի հովացուցիչի մաքրում և յուղում, տերմոքսուկի փոխարինում, սարքավորումների ամբողջական ստուգում)	5000
Օպերացիոն համակարգի և ծրագրերի ստանդարտ փաթեթի տեղադրում և կարգավորում (Windows 8,8.1,10 MS Office, Acrobat reader, Fonts arm/rus) Գործիքային ծրագրերի տեղադրում (Photoshop,COREL DRAW,PROMT, LINGVO), Կիրառական ծրագրերի տեղադրում և կարգավորում (AUTOCAD, ARCHICAD),	4000
HDD փոխարինում ներառյալ SՈՇԻԲԱ 500գբ 7200ռպմ նոթբուքի համար(TOSHIBA 500GB 7200RPM for notbook)	23600
HDD փոխարինում ներառյալ SՈՇԻԲԱ 1000գբ 7200ռպմ նոթբուքի համար(TOSHIBA 1000GB 7200RPM for notbook) կամ համարժեք	29500
HDD փոխարինում ներառյալ SՈՇԻԲԱ 2000գբ 7200ռպմ նոթբուքի համար(TOSHIBA 1000GB 7200RPM for notbook)	36000
Ram-ի փոխարինում ԴԴՌ3 2գբ (DDR3 2GB) ներառյալ Ram-ը	9500
Ram-ի փոխարինում ԴԴՌ3 4գբ (DDR3 4GB) ներառյալ Ram-ը	13600
Ram-ի փոխարինում ԴԴՌ4 4գբ (DDR4 4GB) ներառյալ Ram-ը	18650
Մոնիտորի փոխարինում (ներառյալ մոնիտորը 15.6" LED, 15.6 LED Slim, 15.6 LED Full HD 17.3 LED	55000
Նոթբուքի մայրական տպասալի վերանորոգում (վնասված միկրոսխեմաների, չիպերի, բնիկի, և պահեստամասերի փոխարինում) չվերանորոգման դեպքում մայրական տպասալի փոխարինում ներառյալ տպասալը	20000
Նոթբուքի ստեղնաշարի փոխարինում նորով համապատասխան ստեղնաշարով	18000

Նոթբուքի սնուցման բլոկի փոխարինում նորով համապատասխան բլոկով	14000
Նոթբուքի մարտկոցի փոխարինում նորով համապատասխան մարտկոցով	18000
Մոնիտորի	
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 17" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	11000
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 19" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	17000
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 20"-22" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	23000
Մոնիտորի նորոգում ներառյալ պահեստամասերը 24"-27" (մատրիցա, լամպ, ինվերտոր, մատրիցա, սնուցման բլոկ, մայրական տպասալ կամ անհրաժեշտ այլ պահեստամաս)	29000
LED / LCD/ Plasma / Հեռուստացույցի	
Սնուցման բլոկի նորոգում կամ փոխարինում ներառյալ պահեստամասերը կամ սնուցման բլոկը	22000
Մայրական տպասալի փոխարինում կամ նորոգում ներառյալ պահեստամասերը կամ տպասալը	50000
LED կամ LCD կամ Plasma լույսավորության վերականգնում կամ լույսավորության համակարգի փոխարինում ներառյալ համապատասխան պահեստամասերը	30000
Մատրիցայի փոխարինում ներառյալ համապատասխան մատրիցան	120000
Անխափան սնուցման սարք	
Վերանորոգում (ներառյալ վնասված պահեստամասերը, տպասալ, տռանզիստոր, միկրոսխեմա, տռանսֆորմատոր և այլ պահեստամասեր: Անհրաժեշտության դեպքում վերաչափաբերում)	6000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/4,5Ա	8000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/7Ա	10000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/9Ա	14000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/12Ա	20000
Մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը 12Վ/18Ա	28000
Լազերային բազմաֆունկցիոնալ սարք XEROX B315-ի	
Քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները և չիպը 8000 էջ տպաքանակի համար (A4 5% լցվածությամբ)	30000
Քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները և չիպը 20000 էջ տպաքանակի համար (A4 5% լցվածությամբ)	40000
Թմբուկի փոխարինում նորով 40000 էջ տպաքանակի համար	16500
Թմբուկի չիպի փոխարինում նորով 40000 էջ տպաքանակի համար	8000
Վառարանի թերմոստատայվենի փոխարինում ներառյալ թերմոստատայվենը	25000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ	30000
Թղթի մատուցման ռետինե գլանի փոխարինում ներառյալ Թղթի մատուցման ռետինե գլանը	14000
Վառարանի փոխարինում նորով ներառյալ վառարանը	80000
Սկանավորող բլոկի փոխարինում ներառյալ բլոկը	40000
Լազերային տպիչի	
Դիագնոստիկա սև և գունավոր, Պրոֆիլակտիկա սև և գունավոր	5000
Վերանորոգում սև կամ գունավոր (ներառյալ պահեստամասերը՝ տպասալ, ատամնանիվ, ջերմատաքացուցիչ, մեխանիկական դետալներ) չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	6000

<p>Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները և չիպը HP LJ 5L/6L/1005/1006/1102/1160/ 1320/1505/2015/2035/2055/M126nw/ M127fn/M102a/2100/ 2200 /35A/ 36A/ 05A/12A/85A /83A/87A /88A/17A/30A/26A/78A/59A</p> <p>Canon MF237W/MF 216n/MF 4430/MF3010/LBP6000/LBP6030 /EPA/ 1100 /712/737/ EP22/ EP25/EP26/ EP27/FX9/ FX10/725/728/737//057/051/070/070H , Xerox Work Centre 3045,Phaser 3010/3040/3117/3122 3200/ 3122/ 3260/ 4510B/3020 , Samsung ML1210/1610/2070,MLT-D1085/1640/1642/D101U/D104U/ D107/D109 Lexmark E250/260 ,Pantum PC 211</p>	3000
<p>Լազերային տպիչի քարթրիջը չվերանորոգվելու կամ չլիցքավորվելու (լիցքավորման ընդացքում կամ հետո ոչ լիարժեք տպելու, սևացնելու, կամ լիցքավորված փոշու արտահոսքի) դեպքում քարթրիջի փոխարինում նորով HP LJ 5L/6L/1005/1006/1102/1160/ 1320/1505/2015/2035/2055/M126nw/ M127fn/M102a/2100/ 2200 /35A/ 36A/ 05A/12A/85A /83A/87A /88A/17A/30A/26A/78A/59A , Canon MF237W/MF 216n/MF 4430/MF3010/LBP6000/LBP6030 /EPA/ 1100 /712/737/ EP22/ EP25/EP26/ EP27/FX9/ FX10/725//737/728/057/051/070/070H , Xerox Work Centre 3045, Phaser 3010/3040/3117/3122 3200/ 3122/ 3260/ 4510B / 3020 Samsung ML1210/1610/2070,MLT-D1085/1640/1642/D101U /D104U/ D107/D109 Lexmark E250/260, Pantum PC 211</p>	20000
<p>Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները Pantum BP5100 / BM5100(TL-5120) 3000 էջ-ի համար (A4 5% լցվածությամբ)</p>	5900
<p>Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները Pantum BP5100 / BM5100(TL-5120H) 6000 էջ-ի համար (A4 5% լցվածությամբ)</p>	9000
<p>Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները Pantum BP5100 / BM5100(TL-5120X) 15000 էջ-ի համար (A4 5% լցվածությամբ)</p>	19000
<p>Լազերային տպիչի քարթրիջը չվերանորոգվելու կամ չլիցքավորվելու (լիցքավորման ընդացքում կամ հետո ոչ լիարժեք տպելու, սևացնելու, կամ լիցքավորված փոշու արտահոսքի) դեպքում քարթրիջի փոխարինում նորով Pantum BP5100 / BM5100(TL-5120) 3000 էջ-ի համար</p>	26000
<p>Լազերային տպիչի քարթրիջը չվերանորոգվելու կամ չլիցքավորվելու (լիցքավորման ընդացքում կամ հետո ոչ լիարժեք տպելու, սևացնելու, կամ լիցքավորված փոշու արտահոսքի) դեպքում քարթրիջի փոխարինում նորով Pantum BP5100 / BM5100(TL-5120) 6000 էջ-ի համար</p>	33000
<p>Pantum BP5100 / BM5100 լազերային տպիչի թմբուկի փոխարինում նորով 30000 էջ տպաքանակի համար</p>	12000
<p>Pantum BP5100 / BM5100 լազերային տպիչի քարթրիջի թմբուկի չիպի փոխարինում նորով 30000 էջ տպաքանակի համար</p>	10000
<p>Pantum BP5100 / BM5100 լազերային տպիչի քարթրիջի թմբուկի (DL-5120 Drum Unit)-ի փոխարինում նորով 30000 էջ տպաքանակի համար</p>	35000
<p>Լազերային տպիչի քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը Pantum BP5100 / BM5100(TL-5120) 3000 էջ-ի համար</p>	4500
<p>Լազերային տպիչի քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը Pantum BP5100 / BM5100(TL-5120H) 6000 էջ-ի համար</p>	6500
<p>Լազերային տպիչի քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը Pantum BP5100 / BM5100(TL-5120X) 15000 էջ-ի համար</p>	9000
<p>Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները Pantum M7300FDN (TL-420)</p>	6000
<p>Լազերային տպիչի քարթրիջը չվերանորոգվելու կամ չլիցքավորվելու (լիցքավորման ընդացքում կամ հետո ոչ լիարժեք տպելու, սևացնելու, կամ լիցքավորված փոշու արտահոսքի) դեպքում քարթրիջի փոխարինում նորով Pantum Pantum M7300FDN (TL-420 6K) համար</p>	28000
<p>Լազերային տպիչի քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը Pantum M7100/7300FDN M7100/7300FDN (DL-420) 3000 էջ-ի համար</p>	3800

Լազերային տպիչի Pantum M7100/7300FDN M7100/7300FDN քարթրիջի թմբուկի փոխարինում նորով 30000 էջ տպաքանակի համար	4900
Pantum M7100/7300FDN M7100/7300FDN լազերային տպիչի թմբուկի չիպի փոխարինում նորով 30000 էջ տպաքանակի համար	6000
Լազերային տպիչի քարթրիջի լիցքավորում ներառյալ համապատասխան տոները Pantum P2500/P2507 (PC 211)	3000
Լազերային տպիչի քարթրիջը չվերանորոգվելու կամ չլիցքավորվելու (լիցքավորման ընդացքում կամ հետո ոչ լիարժեք տպելու, սևացնելու, կամ լիցքավորված փոշու արտահոսքի) դեպքում քարթրիջի փոխարինում նորով Pantum P2500/P2507 (PC 211)	22000
Լազերային տպիչի քարթրիջի չիպի փոխարինում ներառյալ չիպը Pantum P2500/P2507	4000
Լիցքավորում լազերային տպիչների քարթրիջների ներառյալ տոները և չիպը Lexmark X544 color, HP LJCP 5225 HP LJCP 1025, HP LJ M176n HP LJ M451dn (HP LJ CP 1025, CE310A, CE311A, CE312A, CE313A/ HP LJ M176n CF350A, CF351A, CF352A, CF353A / M451dn CE410A, CE411A, CE412A, CE413A, MFP M282 207A W2210A, W2211A, W2212A, W2213A)	8000
Լազերային տպիչի քարթրիջը չվերանորոգվելու կամ չլիցքավորվելու (լիցքավորման ընդացքում կամ հետո ոչ լիարժեք տպելու, սևացնելու, կամ լիցքավորված փոշու արտահոսքի) դեպքում քարթրիջի փոխարինում նորով Lexmark X544 color, HP LJCP 5225 HP LJCP 1025, HP LJ M176n HP LJ M451dn (HP LJ CP 1025, CE310A, CE311A, CE312A, CE313A/ HP LJ M176n CF350A, CF351A, CF352A, CF353A / M451dn CE410A, CE411A, CE412A, CE413A, MFP M282 207A W2210A, W2211A, W2212A, W2213A	40000
Լազերային տպիչների վառարանի թերմոստատային փոխարինում ներառյալ թերմոստատայինը (HP/Canon/ Samsung/Xerox/Lexmark/Pantum)	7000
Լազերային տպիչների վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ տեֆլոնե ռետինե լիսեռ (Samsung/Xerox/Lexmark/Pantum)	9000
Լազերային տպիչների վառարանի ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ վառարանի ռետինե լիսեռ (HP/Canon/Samsung/Xerox/Lexmark/Pantum)	8500
